ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Դամկար ՍՊԸ-ն ՀՀ ԳՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/24 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
11	Գրապահարանը ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պատրաստված կլինի լամինացված 18 մմ հաստությամբ E0դասի ՓSU-ից, արտաքին չափսերը՝ 800x 400 x 1800 մմ (L x Խ x Բ): Գրապահարանը պատրաստված կլինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, կլինի ողորկ, առանց ծլեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները կլինեն հարթ և անվտանգ, անհրաժեշտության դեպքում՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներով: Կլինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը կպարտավորվի սեղմ ժամկետներում կկատարվի համապատասխան ամրացում: Կապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Կապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը կլինի հարմարավետ ըստ նպատակային նշանակության շահագործման ժամանակ: Գրապահարանը ունի 300 մմ բարձրությամբ 5 դարակաշար, որոնցից վերևից սկսած 2-ը փակվում են եզրերը մշակված, թրծված թափանցիկ երկփեղկ ապակյա դռներով՝ յուրաքանչյուրը 2 ծխնիով, իսկ ներքևի 3-ը՝ լամինացված 18 մմ հաստությամբ E0դասի ՓSU-ից երկփեղկ դռներով՝ յուրաքանչյուրը 2 ծխնիով: Բոլոր դռները կունենան մետաղական օվալաձև բռնակներ:Դարակները պատրաստված կլինեն լամինացված 18 մմ հաստության E0դասի ՓSU-ից, որոնց աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 1 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC): Աշխատանքային հարթությունը կլինի անփայլ, բաց գույնի (բացառությամբ

	սպիտակի)։ Բոլոր միացումներն կիրականացվեն թաքնված ամրակցումներով։ Գրապահարանի հետնապատը կլինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից(ԴՎՊ) և նույն Ε0դասի ՓՏՍ գույնի։ Պահարանը ամբողջ պարագծով կունենա շրջանակաձև ոտքեր։ Ոտքերը կլինեն կարգավորվող։ Ոտքեր հանդիսացող, տակը դրված ուղղանկյուն հենակի արտաքին չափսերն են՝ 700 x 300 x 100 մմ (Lx Խ x Բ), որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից կամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ 8 մմ է։ Նմուշները մինչ մատակարարում կհամաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ կներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի համարժեք փաստաթուղթ ։ Կսահմանվի երաշխիքային սպասարկում՝ 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման նպատակով։ Ապրանքի վրա կկատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն։ Մակնշումը կկատարվի ռուսերեն, ընթեռնելի տարբերակով։ Մակնշումը կկատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը։ Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում վերոգրյալ տեղեկատվությունը կամփոփվի ուղեկցական թերթիկում

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Дамкар ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԳՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/24 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
11	